ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

---

«18» հոկտեմբերի 2022թ. № 4902-Ա

# «ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ: ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱՋՈՂ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ: ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Առողջապահության նախարարի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 20-Ն հրամանի հավելված 1-ի 15-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի «Մանկաբուժության ամբիոն»-ի վարիչ՝ Կարինե Սարիբեկյանի 30.09.2022թ. հայտը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. Հաստատել 2022թ. հոկտեմբերից կրկնողաբար Երևան քաղաքում ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի «Մանկաբուժության ամբիոն»-ի կողմից կազմակերպվող «Իմունականխարգելման գործընթացի կազմակերպում՝ ընդհանուր հիմունքները և մարտահրավերները: Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի համաճարակաբանական հսկողությունը: Ազգաբնակչության իրազեկում և հաղորդակցություն» թեմայով 6-օրյա դասընթացի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Իմունականխարգելման գործընթացի կազմակերպում՝ ընդհանուր հիմունքները և մարտահրավերները: Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի համաճարակաբանական հսկողությունը: Ազգաբնակչության իրազեկում և հաղորդակցություն» թեմայով 6-օրյա դասընթացի՝

1) մասնակիցներին շնորհել ՇՄՁ 23 տեսական և ՇՄՁ 7 գործնական կրեդիտ,

2) դասընթավարներ՝ Մարգարիտա Բալասանյանին՝ ՇՄՁ 19 տեսական և ՇՄՁ 6 գործնական կրեդիտ, Պիրիջիտա Սիմոնյանին՝ ՇՄՁ 4 տեսական ՇՄՁ 3 գործնական կրեդիտ, Լիլիթ Մարությանին՝ ՇՄՁ 19 տեսական ՇՄՁ 6 գործնական կրեդիտ:

3. Առողջապահության նախարարության քարտուղարության պետ Աստղիկ Առաքելյանին՝ եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը հայտատուին:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

18.10.2022

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

**Հավելված**
**ՀՀ առողջապահության նախարարի**
**«18» հոկտեմբերի 2022թ.**
**N 4902 - Ա հրամանի**

# ԾՐԱԳԻՐ

## «ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ: ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱՋՈՂ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ: ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ 6-ՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2022թ. հոկտեմբերից կրկնողաբար, ք. Երևան ( «ՀՀ ԱՆ ԱԱԻ»)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ
Մանկաբուժության ամբիոն

| | | |
|---|---|---|
| Օր 1 | | |
| 10:00-10:30 | Դասընթացի բացում, մասնակիցների ներկայացում | Մանե Մարանդյան<br>Մարգարիտա Բալասանյան |
| 10:30-11:00 | Դասընթացի նպատակները, օրակարգը | |
| 11:00-11:30 | Նախաթեստ-Առցանց | |
| 11:30-12:00 | Ընդմիջում | |
| ՄԱՍ 1. Իմունականխարգելման գործընթացի կազմակերպում՝ ընդհանուր հիմունքները և մարտահրավերները: Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի էպիդհսկողությունը | | |
| 12:00-13:00 | **Տեսական**<br>Իմունականխարգելման գործընթացի կազմակերպման ընդհանուր հիմունքները և մարտահրավերները | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:30 | **Տեսական**<br>Հայաստանում գործող պատվաստումների ազգային օրացույցը: Պատվաստումների հակացուցումներ (մշտական և ժամանակավոր, իրական և կեղծ) | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 15:30-16:00 | Քննարկում, օրվա նյութի ամփոփում | |
| Օր 2 | | |
| 09:30-11:00 | **Տեսական**<br>Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի՝ ՀԱԴ-երի էպիդհսկողությունը, հիմնական դրույթները: ՀԱԴ-երի էպիդհսկողության բնորոշումը ՀԱԴ-երի տեսակները, արձանագրումը, հաղորդումը, վերլուծությունը, հետադարձ կապը: ՀԱԴ-երի դեպքերի հետազոտումը, խմբակային դեպքերի հետազոտումը: | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 11:00-13:00 | **Տեսական**<br>ՀԱԴ-երի հնարավոր դեպքերը կոնկրետ պատվաստանյութերի ներմուծումից հետո, ստանդարտ բնորոշումները: Հաղորդման ենթակա ծանր ՀԱԴ-երի ցանկը: Անաֆիլաքսիա, ախտորոշումը, տարբերակումը և բուժումը: | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00 -16:00 | **Գործնական**<br>Իրավիճակային խնդիրների լուծում | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 16:00-16:30 | Քննարկում, օրվա նյութի ամփոփում | |
| Օր 3. | | |
| 09:30-11:30 | **Տեսական**<br>ՀՀ-ում արձանագրվող ՀԱԴ-երը, 5 տարվա վիճակագրական տվյալներ | Պիրիջիդա Սիմոնյան |
| 11:00 -12:30 | **Գործնական**<br>Իրավիճակային խնդիր: ՀԱԴ-ի գնահատում, հաղորդում ըստ ձևաչափի, հետազոտման քարտի լրացում | Պիրիջիդա Սիմոնյան |
| 12:30-13:00 | Քննարկում, հարց ու պատասխան | Պիրիջիդա Սիմոնյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-16:00 | **Տեսական**<br>Պատվաստանյութերի անվտանգություն և արդյունավետություն: Մտահոգություն պատվաստանյութերի անվտանգության վերաբերյալ, ասեկոսեներ, միֆեր | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 16:00-16:30 | Քննարկում, 1-ին մասի ամփոփում | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| ՄԱՍ 2. Ազգաբնակչության իրազեկում և հաղորդակցություն, հետադարձ կապ: Հակապատվաստումային շարժման դեմ միջոցառումների իրականացում: Ինչպե՞ս պատասխանել պատվաստումների հակառակորդներին: | | |
| Օր 4 | | |
| 09:30-10:30 | **Տեսական**<br>Իմունիզացիայի հասարակական աջակցություն և հաղորդակցություն, հիմնական դրույթներ | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 10:30-12:00 | **Տեսական**<br>Տեղեկատվության արվեստը և լրատվամիջոցների հետ աշխատանք | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 12:00-13:00 | **Տեսական**<br>Համագործակցություն ազգաբնակչության հետ, բնակչության դերը ծառայությունների մատուցման մեջ | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:00 | **Տեսական**<br>Արդյունավետ համագործակցություն՝ բնակչության մասնակցության ապահովման և մտահոգությունների, սխալ պատկերացումների, ասեկոսեների առաջացման կանխարգելման հարցում | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 15:00-16:00 | **Գործնական**<br>Հանդիպումներ բնակչության տարբեր խմբերի հետ, իմունիզացիայի վերաբերյալ անհանգստացնող հարցերի շուրջ քննարկումներ<br><br>**Խմբային աշխատանք** | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 16:00-16:30 | Քննարկում, օրվա նյութի ամփոփում | |

| | | |
|---|---|---|
| Օր 5 | | |
| 09:30-11:00 | **Տեսական**<br>Տեղեկատվության միջոցներ և ուղիներ: Հիմնական տեղեկատվության հարմարեցում՝ բնակչության կողմից ընկալման համար: Տեղեկացման ուղիներ՝ ռադիո, հեռուստատեսություն, տպագիր նյութեր, սոց կայքեր, այլ | Լիլիթ Մարության/<br>Մարգարիտա Բալասանյան |
| 11:00 -12:30 | **Գործնական**<br>Իմունիզացիայի գործընթացին հասարակական աջակցության կազմակերպում (Մոդուլ 8) | Լիլիթ Մարության<br>Մարգարիտա Բալասանյան |
| 12:30 -13:30 | Ընդմիջում | |
| 13:30-15:30 | **Տեսական**<br>Համագործակցության մեխանիզմները, Ազգաբնակչության հետ աշխատանքի առանձնահատկությունները ՀՀ-ում, տեղեկատվության միջոցները, նյութերը: Իմունականխարգելման գործընթացում տարբեր իրավիճակներում հաղորդակցության պլան | Պիրիջիդա Սիմոնյան |
| 15:30-16:30 | **Գործնական**<br>Դերային խաղեր, խմբային քննարկում | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության<br>Պիրիջիդա Սիմոնյան |
| Օր 6 | | |
| 09:30-10:30 | **Տեսական**<br>Նոր պատվաստանյութերի ներդրման նախապատրաստում, իմունիզացիայի գործընթացին առնչվող լրացուցիչ միջոցառումներ, պատվաստումների նկատմամբ վստահության ձևավորումը | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 10:30-12:00 | **Տեսական**<br>Պատվաստումների ակտիվ հակառակորդների հանրային ելույթներին արձագանքելու սկզբունքները: Պատվաստումների ակտիվ հակառակորդների հետ հանրային քննարկման հիմնական նպատակին հասնելու մարտավարությունները | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 12:00 -13:00 | **Տեսական**<br>Թիրախային լսարան, նրան հասկանալը, «հակադարձ ազդեցության» հասկացություն | Մարգարիտա Բալասանյան<br>Լիլիթ Մարության |
| 13:00 -14:00 | Ընդմիջում | |
| 14:00 -15:00 | **Տեսական**<br>Հաղորդակցության հարցերում «կողմ և դեմ»: Ինչպե՞ս պատասխանել պատվաստումների հակառակորդներին: | Լիլիթ Մարության<br>Մարգարիտա Բալասանյան |
| 15:00-15:30 | Հետթեստ-Առցանց | Մանե Մարանդյան |
| 15:30-16:00 | Թեստերի արդյունքների քննարկում;<br>Դասընթացի  ամփոփում, փակում | Մարգարիտա Բալասանյան<br>Պիրիջիդա Սիմոնյան<br>Լիլիթ Մարության |

Թիրախային լսարան՝ մանկաբույժներ, ընտանեկան բժիշկներ, իմունոլոգներ, նեոնատոլոգներ, մանկական վարակաբաններ, համաճարակաբաններ, բուժքույրեր:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 12-20 հոգի: